

չըջանի հնագույն բնակավայրերից մասնա-
 ւորապէս նրանք, որոնք ունեն -an տեղա-
 նուանակերտ վերջածանցներ: Դրանցից
 են Appan, Barhan, Bisan, Bit-Kannan,
 Dagilan, Mišlan, Kattunan եւ այլն⁶⁶: Կար-
 ծում ենք, որ այս եւ այսպիսի վերջածան-
 ցով տեղանունների ստեղծման մէջ իր բա-
 ժինը կարող էր ունենալ նաեւ հնդեւրո-
 պական-հայկական էթնիկ տարրը (Հմմտ.
 հին Հայաստանի տեղանուններից Ալեւան,
 Գարդման, Դերջան, Երեւան, Թորդան,
 Կնճան, Կորիճան, Նկան, Սեւան եւ այլն, ո-
 ռոնց տեղանունակերտ բաղադրիչները
 նոյնն են հայ. բերան, գերան, գլան, դերձան,
 դորան, խարան, խորան, ծորան, կոան եւ այլ
 բառերի -ան վերջածանցի հետ):

Արատտա երկրանուն հնդեւրոպա-
 կան ծագման մասին է խօսում նաեւ հին
 հնդիկների կողմից դրա կիրառման փաս-
 տը: «Մահաբհարատա» դիւցազնավէպում
 այդպէս է կոչուած յետագայ Փան-
 ջաբ//«Հնգագէտք» նահանգը: Անշուշտ,
 միջինասիական ու իրանական չոր տա-
 փաստանները լքած եւ ջրառատ Փենջա-
 բում հաստատուած հնդարիական ցեղերն
 իրենց նոր հայրենիքը Արատտա կոչել են
 ի յիշատակ իրենց՝ արդէն յուշ դարձած
 նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխար-
 հի⁶⁷: Արատտան նախահայրենիքը լքած
 բնակչութեան յիշողութիւններում նաեւ
 պաշտամունքի առարկայ էր, անգամ՝ երկ-
 նային տեղադրումով: Միջագետքի աստ-
 ղագէտները երկնային Յուլ համաստեղու-
 թիւնը եւս կոչել են Արատտա⁶⁸: Թէ ի՞նչ

66 П. Гарелли, Замечания по топонимике из архи-
 вов Эблы, - "Древняя Эбла", стр. 283-284, 285,
 293; А. Арки, Заметки о географическом кру-
 гозоре текстов Эблы III тыс. до н. э., - "Древняя
 Эбла", стр. 308.

67 Տե՛ս նաեւ Ա. Մովսիսեան, նշ. աշխ., էջ 29:

68 Նոյն տեղում, էջ 83, ծան. 6:

կապ կարող էին նրանք նկատած լինել
 «ցուլ» եւ «Արատտա» հասկացութիւնների
 միջեւ ցոյց է տալիս Արատտա երկրա-
 նուան հիմք հ.-ե. իՏ- «հոսել» (>հայ. *առ-,
 որից առու եւ առատ) արմատից ծագած
 բառերի իմաստային տարբերակուածու-
 թիւնը: Այդ բառերի մի մասը ազգակից լե-
 զուներում պարունակում է «հոսող
 (նիւթ)», իսկ միւս մասը՝ «հոսեցնող
 (էակ)» իմաստները: Հմմտ. հին հնդկ.
 árṣati «հոսել», rāsa «հիւթ», լատին. rosa,
 հին սլաւ. rosa, լիտ. rasà «ցող», իսկ հայ.
 առն «վայրի խոյ», հին հնդկ. ṛṣabhá
 «ցուլ», հին պարս. aršan «այր, տղա-
 մարդ», յուն. ἄρσην, ἄρρην «արու, այր,
 առնական», հոմեր. յուն. ἀρνείος «խոյ»՝
 «ըմբռնուելով արուն իբրեւ «հոսեցնող»⁶⁹:

Այսպիսով, Միջագետք-Ասորիքեան
 տարածաշրջանում վաղ նախնադարում
 հաստատուած հնդեւրոպական, ապա եւ՝
 հնդեւրոպական-հայկական էթնիկ տարրի
 ներկայացուցիչները կարող էին պահած
 լինել յիշողութիւնը իրենց հիւսիսային,
 դով ու խոնաւ հայրենիքի մասին, եւ ի
 տարբերութիւն ու ի հակադրութիւն Մի-
 ջագետք-Ասորիքի արեւակէզ հարթու-
 թիւնների, այն կոչել Aratta: Այս անունը
 նրանց ըմբռնումով պարունակել է կորու-
 սեալ Դրախտին վերաբերող առատ բառի
 բոլոր իմաստները՝ «լի, յորդ», «առատա-
 բաշխ, բարեգործ», «պայծառ, անարատ»:
 Այսպիսի տարողունակ իմաստներ պարու-
 նակած Aratta երկրանունը նրանցից էր
 ժառանգութիւն մնացել հին շումերներին:

69 ՀԱԲ, ֆուն. Ա, էջ 261:

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յովհաննես Խորիկեան

Յոյն պատմիչ Հերոդոտոսը, անդրա-
 դառնալով Աքեմենեան տէրութեան VIII
 սատրապութեանը, գրում է. «Սուսայից եւ
 կիսսիեցիների երկրի մնացած մասից վերց-
 ւում էր երեք հարիւր տաղանդ: Սա ութե-
 րորդ նահանգն էր»¹: Այս տեղեկութիւնից
 հարց է ծագում, թէ կիսսիեցիներ-կիսսիա-
 ցիների երկրի մնացած մասը ո՞ր սատրա-
 պութեան մէջ է եղել, կամ էլ արդե՞օք
 հէնց Սուսան է համարուել կիսսիեցիների
 երկրի մի մասը:

Պատմիչի միւս տեղեկութիւնները
 Սուսայի եւ կիսսիեցիների վերաբերեալ
 բացայայտում են կարեւոր իրողութիւն-
 ներ: Այսպէս, Քսերքսէսի Հելլադա արշա-
 ւող բանակի կազմում պարսիկներից, մե-
 դացիներից յետոյ յիշատակուած են կիս-
 սիացիները², ինչը վկայում է տէրութեան
 մէջ նրանց ունեցած բարձր դիրքի մասին:

Էլամացիները կամ սուսիանացիները
 իրենց ռազմական ուժով շատ հնուց էին
 յայտնի³: Ըստ էութեան, Սուսայում պար-
 սիկները միշտ էլ մեծաթիւ զօրք են պա-

հել⁴: Էլամերէնը Աքեմենեան տէրութեան
 պաշտօնական լեզուներից մէկն էր եւ
 գործածուած էր հիմնականում վարչարա-
 րութեան մէջ⁵: Պերսեպոլիսի բարձրաքան-
 դակներում էլամացի հարկատուները
 պատկերուած են երկրորդ տեղում⁶:

Հերոդոտոսի յաջորդ տեղեկութիւնից
 պարզուած է, որ Սուսան գտնուած էր
 Քոասպէս գետի ափին՝ Կիսսիա երկրում⁷:
 Քոասպէս գետը, որի ջուրն էին միայն
 խմում Աքեմենեան արքաները⁸, նոյնա-
 նում է Դանիէլի մարգարէութեան մէջ յի-
 շատակուող Ու(ք)լաղ գետին, որի ափին էր
 գտնուած Էլամի Շօշ ապարանքը⁹, այ-
 սինքն՝ Էլամի անուան տակ հասկացուել է
 նաեւ Սուզան: Ուլաղ գետը նոյնանում է
 յունական աղբիւրներում յայտնի Εὐλαϊος-
 ին, որը ժամանակակից Քարխեհը¹⁰ կամ
 Քարունն է:

Սուզայի սեպագիր արձանագրու-
 թիւններից մէկում Սուսան՝ Էլամի թագա-
 ւորութեան հին մայրաքաղաքը, յայտնի է
 Գūšā անունով, էլամերէն եւ բաբելոներէն
 Šu-ša-an, եբրայերէն Šu-šn ձեւերով¹¹: Սու-

1 Հերոդոտոս, Պատմութիւն իմը գրքից, թարգմա-
 նութիւնը Ա. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերո-
 դոտոս), Երեւան, 1986, III, 91:
 2 Նոյն տեղում, VII, 62, 210: Տե՛ս, օրինակ, J.
 Yoyotte, Les inscriptions hiéroglyphiques. Darius et
 l'Égypte, - "Journal Asiatique", t. 260, Paris, 1972, f.
 3-4, p. 258. Կիսսիացիներից նոյնացրել են կա-
 շիս-կասիսների ֆես, որոնք Հերոդոտոսի մօտ
 փոխարինում են էլամացիներին (տե՛ս Ա. Թ.
 Olmstead, History of the Persian Empire, Third
 Impression, Chicago, 1960, pp. 161, 212, 239; Ի.
 М. Дьяконов, Языки древней Передней Азии,
 Москва, 1967, с. 87):
 3 Ctesias' History of Persia: tales of the Orient,
 translated with commentaries by L. Llewellyn-Jones
 and J. Robson, London, New York, 2010, p. 132.

4 Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ա. Կրկեաշա-
 րեանի, Երեւան, 1970, էջ 49:
 5 Ctesias' History of Persia, p. 56.
 6 М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и
 экономика древнего Ирана, Москва, 1980, с. 193.
 7 Հերոդոտոս, V, 49, 52:
 8 Նոյն տեղում, I, 188: Տե՛ս նաեւ Ctesias' History of
 Persia, p. 217. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացի
 պատմութիւնը, - «Ալեքսանդր Մակեդոնացի»
 (այսուհետեւ՝ Ռուփոս), Երեւան, 1987, էջ 376:
 9 Տե՛ս Դանիէլ, Ը 2:
 10 G. G. Cameron, History of Early Iran, Chicago,
 Illinois, 1936, p. 189.
 11 R. Kent, Old Persian. Grammar. Texts. Lexicon.
 2nd ed., New Haven, 1953, pp. 143, 188.

սա անունը նշանակում է «շուշան», եւ քաղաքը տեղադրւում է ժամանակակից Շոշի մօտ՝ Քոասպէս գետի վտակ Շահուրի ափին¹²: Հերոդոտոսի տեղեկութիւններէն յայտնի է, որ պատմիչը (եւ ոչ միայն նա¹³) Սուսան համարում էր Աքեմենեանների գլխաւոր եւ արքայանիստ քաղաքը, որը հիմնադրել էր ասորեստանցիների առասպելական թագաւոր Մեմնոնը¹⁴: Պերսեպոլիսի հիմնադրումից յետոյ Սուսան շարունակում է մնալ տէրութեան մայրաքաղաքներից մէկը, որտեղ Աքեմենեան արքաները անցկացնում էին ձմեռը կամ գարունը¹⁵: Դարեհ Ա-ն վերականգնում է քաղաքի պարիսպները եւ կառուցում մեծ ու շքեղ պալատ¹⁶: Բաբելոն քաղաքի դարպասներից մէկը կոչուել է կիսիացիների անունով¹⁷:

Ստրաբոնը յայտնում է, որ Սուզայում իւրաքանչիւր պարսից թագաւոր իր պա-

լատն էր կառուցում¹⁸: Սուսայում եւ դրա շրջակայքում էին բնակեցւում գերեզմարուած ժողովուրդները՝ կապադովկիացիներ, թերմիլներ (լիւկիացիներ), եգիպտացիներ¹⁹, որոնց մի մասին յետագայում տեղափոխում էին այլ վայրեր: Գերեզմարուած միլետացիներին Դարեհ Ա-ն Սուսայից տեղափոխում է Կարմիր ծովի մօտ՝ Ամպէ քաղաք²⁰, իսկ էրիտրէացիները բնակեցւում են Կիսսիայի Արդերիկա գիւղում²¹:

Ինչ վերաբերում է կիսիացիներին, ապա սրանք համապատասխանում են պարսկական սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող Մյա կամ Սյա-ին, իսկ hal-tam-ti-ին էլամական տեղական անուանաձեւն է: Յունարէնում անունը հանդիպում է Σούσον, Σουσίς, Σουσιανή տարբերակներով:

Այսպէս, անդրադառնալով բաբելոնացիներին, յոյն պատմիչ Ստրաբոնը գրում է, որ նրանց հետ հիւսիսում սահմանակցում են հայերը եւ մարերը մինչեւ Ջագրոսի գետը եւ սրա շուրջ ապրող ցեղերը²²: Նկատի ունենալով Ստրաբոնի այլ հաղորդումները²³ կարող ենք եզրակացնել, որ ամասիացի աշխարհագրի համար Բաբելոնն ընդարձակ երկիր էր, որն ընդգրկում էր գրեթէ ամբողջ Միջագետքը: Այն սահմանակից էր ե՛ւ Հայաստանին, ե՛ւ Մարաստանին: Վերջինիցս բաժանուած էր

12 A Commentary on Herodotus Books I-IV, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press, Inc., New York, 2007, p. 487. Šušān անունով մի քաղաք յիշատակում է նաև Բորսիպպայի մօտ՝ որպէս տնտեսական եւ վարչական կարեւոր կենտրոն (տե՛ս M. A. Дандамаев, Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 332, 362):

13 Տե՛ս նաև Քսենոփոն, Կիրոպեդիա, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երևան, 2000, էջ 173: Քսենոփոնը յիշատակում է Սուսայի թագաւոր Աքադաստասին (նոյն տեղում, էջ 257), իսկ Էլլամի գրաւումը Կիրոսի կողմից թուագրում է առաւել փառանկանութեամբ Ք. ա. 549 թ. (տե՛ս M. A. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 19):

14 Հերոդոտոս, V, 53, 54; VII, 151: Սուսան Կիրոս Բ-ի եւ Գաւումաստայի ժամանակ նոյնպէս տէրութեան մայրաքաղաքն էր (տե՛ս M. A. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, с. 19, 73): Պլինիոս Աւագը Սուսայի բիմնադրումը կապում էր հէնց Դարեհ Ա-ի հետ (տե՛ս Pliny, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, 133, p. 438):

15 Քսենոփոն, Կիրոպեդիա, էջ 359:

16 R. Kent, Old Persian, p. 143.

17 Հերոդոտոս, III, 155, 158:

18 Страбон, География в 17 книгах (այսուհետեւ՝ Страбон), перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, с. 682.

19 Ctesias' History of Persia, p. 178; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Lipsiae, 1826, I, 46, p. 59.

20 Հերոդոտոս, VI, 20. M. A. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, с. 170.

21 M. A. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, с. 128.

22 Страбон, с. 686.

23 Ստրաբոնը գրում է, որ հնում Ասորեստանի մայրաքաղաքը Բաբելոնն էր, եւ Ադիաբեդը Բաբելոնի մի մասն էր (տե՛ս Страбон, с. 690-691):

Ջագրոսով²⁴: Ինչ վերաբերում է հնում Սիտակենէ կոչուած Ապոլլոնիատիսին, ապա Ստրաբոնի հաղորդումներից մէկը Սիտակենէի մասին ունի հետեւեալ բովանդակութիւնը. «Սիտակենէն ընդարձակ եւ բերրի վայր է՝ Բաբելոնի եւ Սուսիանայի միջեւ, այնպէս որ ամբողջ ճանապարհը Բաբելոնից Սուսա մեկնողների համար անցնում է դէպի արեւելք Սիտակենէի միջով»²⁵: Մէկ այլ տեղեկութեան մէջ հեղինակը յայտնում է, որ Սուսիանային հարեւան երկիրը Բաբելոնի մի մասն է, որը նախկինում կոչուել է Սիտակենէ, իսկ յետոյ Ապոլլոնիատիս, եւ երկու երկրներից վերեւ՝ հիւսիսից արեւելք, ապրում են էլլամացիները եւ պարէտակէնները: Ընդ որում, պատմիչը յաւելում է, որ պարէտակէններն ապրում են աւելի մօտ ապոլլոնիատիսներին, էլլամացիները պատերազմում են այս երկու ժողովուրդների եւ սուսիացիների դէմ, իսկ ուքսիացիները՝ էլլամացիների դէմ²⁶: Ստրաբոնի կողմից Սիտակենէի նոյնացումը Ապոլլոնիատիսին թոյլ է տալիս աւելի յստակեցնել այդ երկրի տեղորոշումը, եւ այս հարցում կարեւոր են Իսիդոր Քարակացու տեղեկութիւնները: Համաձայն նրա «Պարթեւական կայանների» Սեւեւիայից յետոյ՝ դէպի հիւսիս, Ապոլլոնիատիս երկիրն է՝ յունական Արտեմիտա քաղաքով, որի միջով հոսում է Սիլլա (ներկայումս՝ Դիալա) գետը: Շարունակելով իր տեղեկութիւնները՝ Իսիդորը գրում է, որ Ապոլլոնիատիսից յետոյ Խալոնիտիս երկիրն է՝ Խալա յունական քաղաքով. ընդ որում՝ Ջագրոս լեռը բաժանում է Խալոնիտիս երկիրը Մեդերի երկրից²⁷: Հե-

ղինակը նաև ցոյց է տալիս, որ հարաւարեւմուտքում Մարաստանի սահմանը Կարինա երկիրն է, որի անունը պահպանուել է այժմեան Կերենդ բնակավայրի անունանման մէջ²⁸: Հաղորդումը ցոյց է տալիս, որ Սիտակենէ-Ապոլլոնիատիսը եւ Խալոնիտիսը գտնուել են Դիալա գետի աւազանում, սակայն Ստրաբոնի եւ Իսիդորի տեղեկութիւնների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ վերջինս Ապոլլոնիատիսը տեղադրում է Ստրաբոնի Սիտակենէից հիւսիս, հետեւաբար՝ Ապոլլոնիատիսը, նոյնանալով հանդերձ Սիտակենէին, տարածուել է վերջինիս հիւսիսային հատուածում²⁹: Ըստ էութեան, Սիտակենէն հնում ունեցել է ընդարձակ տարածութիւն, եւ պատահական է, որ Սիտակենէն՝ որպէս սատրապութիւն, յիշատակուում է Ռուփոսի կողմից: Դատելով պատմիչի տեղեկութիւնից՝ Սիտակենէն գտնուել է Բաբելոնի եւ Սուսայի միջեւ³⁰: Սիտակենէի ընդարձակ տարածքը

24 Страбон, с. 492:

25 Նոյն տեղում, էջ 690: Մէկ այլ տեղում եւս Սուսան եւ Սիտակենէն յիշատակում են միասին: Հեղինակը յիշատակում է նաև մէտոսական սիտակենէներ ցեղը (տե՛ս նոյն տեղում, էջ 470, 686):

26 Նոյն տեղում, էջ 679:

27 Է. Դանիելեան, Իսիդոր Բարսիլագու «Պարթեւական կայանները», ՊՐՀ, 1971, թիւ 4, էջ 173: Տե՛ս նաև C. Muller, Geographi Graeci Minores,

Vol. I, Parisiis, 1855, pp. 249-250. Խալոնիտիս երկիրը Ջագրոսի լանջերին, Ապոլլոնիան էլ Խալոնիտիսից արեւմուտք՝ Տիգրիսի արեւելեան ափին, յիշատակում է Պոլիբիոսը (տե՛ս The General History of Polybius, Vol. II, by Mr. J. Hampton, London, 1809, p. 231, 235): Խալոնիտիսը նոյնանուն է Անանուն Ռաւեննացու Խալոնիտիսին (տե՛ս Ravennatis Anonymi Cosmographia, ed. M. Pinder et Parthey, Berolini, 1860, II, 5, p. 51):

28 Է. Դանիելեան, նշ. աշխ., էջ 173:

29 Նոյն տեղում, էջ 178, ծմբ. 35: Սիտակենէն՝ Սուսիանէի եւ Քալոնիտիսը՝ Ջագրոսի հարեւանութեամբ յիշատակում է նաև Պլինիոս Աւագը (տե՛ս Pliny, Natural History, VI, 114; 122; 131-132, pp. 424, 430, 436, 438):

30 Rufus Curtius Quintius, History of Alexander, with an English transl. by John C. Rolfe, Vol. I-II, Cambridge-Massachusetts-London, 1956, Loeb Classical Library, V, II, 1-8. Սիտակենէները մասնակցում են նաև Գաւգամելայի ճակատամարտին (տե՛ս Arrian, Anabasis Alexandri, with an English translation by E. Iliff Robson, Vol. I-II, Cambridge-Massachusetts-London, 1958-1961, Loeb Classical Library, III, 8, 5; 11, 5): Սիտակենէն Բաբելոնի եւ Սուսիանէի միջեւ յիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս Դիոդորոս Սիկիլացի, Պատմական գրադարան, թարգմ.

նկատի ունի Պտղոմէոսը, երբ նշում է, որ Միտակենէն գտնուում էր Սուսիանայի Հարեանութեամբ, իսկ Ապոլլոնիատիսն էլ յիշատակում է Միտակենէից Հիւսիս³¹: Ի վերջոյ, Քսենոփոնի Միտակէ քաղաքը գտնուում էր Տիգրիսի աջափնեայ տարածքում³², եւ Հնարաւոր է, որ ուշ ժամանակներում քաղաքի բնակչութեան տեղաշարժի հետեւանքով քաղաքի անունն աստիճանաբար տարածուում է Տիգրիսից արեւելք ընկած տարածքների վրայ, որոնք սկսում են կոչուել Միտակենէ: Այդուհանդերձ, ապոլլոնիատիսների Հարեանութեամբ պարետակենների տեղադրութիւնը չի հաստատուում: Ստրաբոնը գրում է, որ Պարսքին սահմանակից են Պարետակենան եւ Կոսսէյեան՝ մինչեւ Կասպիական դռներ, իսկ Սուսիանային սահմանակից է էլիւմայիսը, վերջինիս էլ՝ Չագրոսի շրջանն ու Մարաստանը³³: Պարետակեններին՝ որպէս մարական ցեղերից մէկը, յիշատակում է

բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ա. Կրկեաշարեանի, Երեւան 1985, էջ 98. *Diodori Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVII, 65, 110, pp. 167, 212): Քալոնիտիս երկրի կենտրոնը հաւանաբար Գիողորոս Սիկիլիացու յիշատակած Կոլոնոս քաղաքն է, որտեղով անցնում էր Մեդիա տանող երկու ճանապարհներից մէկը (նոյն տեղում, էջ 127):

31 **H. Humbach, S. Ziegler, Ptolemy Geography**, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, pp. 28-29. Պտղոմէոսը յիշատակում է նաեւ Ապոլլոնիատիսի եւ Միտակենէի կենտրոնները՝ Ապոլլոնիա եւ Միտակէ քաղաքները (նոյն տեղում, էջ 32-33):

32 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 48: Հեկատեոսի յիշատակած Պարսի Միտակէ քաղաքը վերագրում է կա՛մ Բաբելոնիային, կա՛մ Մարաստանին (տե՛ս **C. Müller, Fragmenta Historicorum Graecorum**, Vol. I, Parisiis, 1841, p. 12, fr. 184; **E. Herzfeld, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East**. Wiesbaden, 1968, p. 10): Դատելով Արիանոսի տեղեկութիւնից՝ սիտակենները համարուել են բաբելոնացիների սիմասը (տե՛ս **Արիանոս, Ալեքսանդրի արշաւանքը**, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետեւ՝ **Արիանոս**), Երեւան, 1987, էջ 97):

33 **Страбон**, с. 690.

Հերոդոտոսը³⁴, սակայն այս տեղեկութիւնը թոյլ չի տալիս տեղորոշել նրանց: Արիանոսը, խօսելով Դարեհին Հետապոնդո Ալեքսանդրի մասին, գրում է, որ վերջինս Մարաստան է շարժուում Պարսքից եւ մինչեւ Մարաստան ներխուժելը գրաւում է պարետակենների երկիրը՝ դարձնելով առանձին սատրապութիւն³⁵: Ռուփոսի տեղեկութիւնից նոյնպէս երեւում է, որ Պարետակենէն Մարաստանին սահմանակից շրջան էր, որտեղ յիշատակում է Թաբաս քաղաքը³⁶ Պոլիբիոսի Թաբայը³⁷: Ստրաբոնն իր տեղեկութիւններից մէկում գրում է, որ Չագրոսից յետոյ՝ Բաբելոնից վերեւ, էլիւմացիների եւ պարետակենների լեռնային երկիրն է, իսկ Մարաստանից վերեւ՝ կոսսէյեների երկիրը³⁸: Ստրաբոնը միաժամանակ յայտնում է, որ պարետակենների երկրից է հոսում Արաքս գետը, որը գետանցում է Ալեքսանդրը Պերսեպոլիս մօտ³⁹: Պարետակենները յիշատակում են նաեւ էլիւմացիներից յետոյ, իսկ նրանց երկիրը՝ Կարմանիայի եւ Պարթեւստանի, նաեւ Մարաստանի Հարեանութեամբ⁴⁰: Պտղոմէոսը գրում է, որ Պարսքի՝ Մարաստանին միացող Հատուածը կոչուում է Պարայտակենէ⁴¹: Պլինիոս Աւագը պարետակեններին յիշատակում է Պարթեւքի եւ Արիանայի միջեւ, ինչը պէտք է ուղղել նշուած երկրներից արեւմուտք, քանի որ մէկ այլ Հաղորդման մէջ Պարետակենէն

34 **Հերոդոտոս**, I, 101:
 35 **Arrian, III, 18, 10-11; 19, 1-3.**
 36 **Rufus, V, XIII, 1-2.**
 37 Միշտ անուանումն է *Gabai* (տե՛ս **И. Дьяконов, История Мидии**, М.-Л. 1956, с. 146).
 38 **Страбон**, с. 492.
 39 Նոյն տեղում, էջ 677:
 40 Նոյն տեղում, էջ 85, 675, 684:
 41 **H. Humbach, S. Ziegler, Ptolemy Geography, book 6, p. 66-67.** Այս Պարետակենէնն ակաթի ունի նաեւ Գիողորոս Սիկիլիացին (տե՛ս **Գիողորոս Սիկիլիացի**, էջ 27, 133, 139). սրա քաղաքն էր Գաբեներն՝ Ռուփոսի Թաբասը: Հաւանաբար Սպահանն է (տե՛ս **R. Frye, The History of Ancient Iran**, München, 1983, p. 149):

յիշատակում է Պարսքի Հարեանութեամբ⁴², այսինքն՝ դէպի Հիւսիս: Ելնելով այս բոլոր տեղեկութիւններից՝ կարելի է պարետակեններին տեղադրել էլիւմայիսից արեւելք, Պարսքից Հիւսիս, Մարաստանից Հարաւ, Կարմանիայից արեւմուտք՝ ներկայիս Սպահանի շրջանում՝ ընդգրկելով ժամանակակից Չայնեդեուզ գետի աւազանը⁴³, ընդ որում՝ Սպահանը Համապատասխանում է Պտղոմէոսի կողմից Պարսքի կազմում յիշատակուող Ասպաղանային⁴⁴: Հարաւային ուղղութեամբ Մարաստանը սահմանակից էր էլիւմայիսին, որը աղբիւրներում յիշատակում է նաեւ Սուսիանա, Կիսիական Կոսսէյա, Ուքսիա անուններով: Վերջին անունով երկիրը Ստրաբոնը յիշատակում է Սուսայի եւ Պարսքի միջեւ՝ նշելով նաեւ, որ Խոսսպէս գետը սկիզբ է առնում ուքսերի շրջանից, իսկ ուքսերը եւ էլիւմացիները սահմանակից են մարդերին ու սուսիացիներին, կոսսէյները՝ մարերին⁴⁵: Քոսսայեներին, որոնց հետ դաժան Հաշուեյարդար է տեսնում Ալեքսանդրը⁴⁶, Արիանոսը Համարում է ուքսերի Հարեանները: Նրանք հիմնականում ներկայացնում են էլիւմի արեւելեան շրջանները՝ Պարսքի Հարեանութեամբ: Ուքսերի երկրով հոսում էր Պասիտիգրի-

42 **Pliny, Natural History**, VI, 116; 131, pp 422, 436.
 43 Հմմտ. **E. Herzfeld**, *Ազ. աշխ.*, էջ 301. **И. Дьяконов, История Мидии**, с. 84, 91.
 44 **E. Herzfeld, Medisch und Parthisch**, “Archaeologische Mitteilungen aus Iran”, Bd. VII, Ht. I, Berlin, 1934, S. 9, 11; **H. Humbach, S. Ziegler, Ptolemy Geography**, book 6, pp. 68-69.
 45 **Страбон**, с. 494, 676-677, 690. Աքեմենեան թագաւորները Սուսայից Պերսեպոլիս անցնելու համար նոյնիսկ ուքսերին հարկ էին վճարում (**М. А Дандамаев., В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана**, с. 118): Խոսսպէս կամ Քոսսպէս գետը հոսել է ոչ թէ ուքսերի, այլ կոսսէյների երկրից: Ստրաբոնն իրաւացիօրէն մշում է, որ ուքսերի երկրից հոսել է Պասիտիգրիսը (տե՛ս **Страбон**, с. 677):
 46 **Плутарх, Избранные жизнеописания**, т. II, Москва, 1987, Александр, с. 431.

սը⁴⁷, Դիողորոս Սիկիլիացու Տիգրիսը⁴⁸: Արիանոսը քոսէյեներին եւ տապիւրներին Համարում է Պարսքին սահմանակից ցեղեր⁴⁹, ինչը տապիւրների դէպքում ճիշտ է, իսկ քոսէյեների պարագայում պէտք է նկատի ունենալ ամբողջ էլիւմը, ոչ թէ նրամի մասը: Ռուփոսը Քոսսէյեան լեռների բնակիչներին յիշատակում է Գաւգամելայի ճակատամարտում, բաբելոնացիներից յետոյ⁵⁰: Միաժամանակ յայտնում է, որ Պասիտիգրիսը սկիզբ է առնում ուքսերի լեռներից, որոնց մարզը սահմանակից է

47 **Arrian, III, 17, 1; VII, 10, 6; 15, 1-2.** ըստ Ստրաբոնի՝ Պասիտիգրիս գետը հոսում է ուքսերի երկրից (տե՛ս **Страбон**, с. 688): Մեր կարծիքով՝ Պասիտիգրիսը ներկայիս Չայնեդեուզ գետն է: Գիողորոս Սիկիլիացին նոյնպէս գրում է, որ Պասիտիգրիսը հոսում է Ուքսիանէից՝ ուքսերի երկրից (տե՛ս **Գիողորոս Սիկիլիացի**, էջ 99-100, 125-126): Նշենք, որ Պասիտիգրիսը նոյնացուել է Քարուն գետին (տե՛ս **J. M. Cook, The Rise of the Achaemenids and Establishment of their Empire**, “The Cambridge History of Iran”, Vol. 2, Cambridge University Press, 1985, p. 242; **D. T. Potts, The Archaeology of Elam: Formation and Transformation of an Ancient Iranian State**, Cambridge University Press, 1999, p. 16):

48 **Diodori Bibliotheca Historica**, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVII, 67, p. 169.

49 **Arrian**, VII, 23, 1.

50 **Rufus**, IV, XII, 10. Կոսսէյեան լեռները յիշատակում է նաեւ Ստրաբոնը (տե՛ս **Страбон**, с. 688): Կիսիացիների երկիրը՝ Կոսսիոն, յիշատակում է Անանուն Ռուտենացին (տե՛ս **Ravennatis Anonymi Cosmographia**, II, 5, p. 51): Ըստ Գիողորոս Սիկիլիացու՝ Մարաստան տանող ճանապարհներից երկրորդն անցնում էր կոսսայեների ցեղի տարածքով: Վերջիններս մասնակցում են Գաւգամելայի ճակատամարտին (տե՛ս **Գիողորոս Սիկիլիացի**, էջ 95, 127): Հեղինակը նաեւ յայտնում է, որ Ալեքսանդրը հնազանդեցնում է Սուզիանան, ուքսերին, կոսսայեներին (տե՛ս **Diodori Bibliotheca Historica**, ed. L. Dindorfius, Vol. III, XVII, 65; 67; 111, pp. 168, 169, 214): Վերջիններիս հեղինակը յիշատակում է Մարաստանի լեռնային շրջաններում, այսինքն՝ հարատւ: Հնարար է, որ կոսսայեները վարչական առումով են մտել Մարաստանի մէջ, թէեւ նրանց բնակութեան շրջանը կարող էր տարածուել նաեւ Սուզիանէից հիւսիս, արդէն Մարաստանի հարաւային լեռնային շրջաններում:

Շօշին եւ ենթարկւում էր Շօշի սատրապին⁵¹: Ըստ Պտղոմէոսի՝ Սուսիանէի ծովի (նկատի ունի Պարսից ծոցը) ուղղութեամբ ընկած շրջանները բնակեցնում են էլիւմացիները, իսկ Ասորեստանին յաջորդող տարածքները՝ էլիւմացիներից վերեւ՝ կոսսայները⁵²: Պլինիոս Աւագը աւազակ ուքսերին տեղադրում է Սուսիանայից արեւելք⁵³: Բերուած տեղեկութիւնները աներկբայօրէն ցոյց են տալիս, որ կիսսիացիները, ուքսերը, Քոսէյեան լեռների բնակիչները նոյնանում են, եթէ ոչ էթնիկական, ապա աշխարհագրական առումով, ընդ որում՝ էլիւմայիս եւ Սուսիանա անունները կապուած են նոյն երկրի հետ, որի տարբեր անուանումները գալիս են այս կամ այն ժողովրդի լեզուից: Սա էլ պատճառ է դարձել, որ հին հեղինակները միեւնոյն երկրի կամ ժողովրդի տարբեր անուանումները շատ դէպքերում օգտագործեն կողք կողքի, եւ շփոթութիւն առաջանայ, թէ գործ ունեն տարբեր ժողովուրդների հետ: Օրինակ՝ Սուսիանա տեղանունը տակ պէտք է նկատի ունենալ Սուսա քաղաքը՝ յարակից տարածքով (հին պարսկերէն՝ Huvaža, Hūža, hūžiya, արամեերէն՝ hūzāyē), որի հետ կապուած է յունարէն ուքսեր ժողովուրդը եւ Ուքսիա քաղաքը՝ ժամանակակից Ահուզը: Էլիւմայիս-էլամը կապուած է էլամերէն Haltamti, Hatamti (էլամացիների երկիր⁵⁴), ակկադերէն Elamtu(m) (ժողովրդական ստուգաբանութեամբ կամ շումերերէնից թարգմանաբար՝ լեռնային կամ Վերին երկիր⁵⁵), արա-

մերէն Elumāyē հետ⁵⁶: Կիսսիացի-կոսսէյները, որոնց անուան տակ յոյները նկատի են ունեցել իրանական Hūža երկիրը, մասնագիտական գրականութեան մէջ նոյնացրել են կասսիտների հետ, որոնք ապրել են էլամում եւ կամ էլ էլամից հիւսիս՝ Ջագրոսի լեռներում, հիմնականում՝ Լուրիստանում⁵⁷: Սուսիանան իր էթնիկական կազմով երբեք էլ ամբողջութեամբ իրանալեզու չդարձաւ, եւ եկուոր իրանական ցեղերը ապրում էին տեղի բնակչութեան հետ կողք կողքի: Չնայած էլամի էթնիկական խայտաբղետ կազմին, այն քաղաքական առումով ամբողջական էր: Նոյն Ստրաբոնի մի քանի հաղորդումներից երեւում է, որ աշխարհագէտը Կոսսէյա երկրի անուան տակ նկատի ունի հին էլամի տարածքը, ընդ որում՝ կոսսէյները օգնել են բաբելոնացիների եւ սուսիացիների դէմ կռուող էլիւմացիներին⁵⁸: Կոսսէյների, սուսիացիների, էլիւմացիների համատեղ յիշատակութիւնը կրկին ցոյց է տալիս

Name of Elam in Sumerian, Akkadian, and Hebrew, pp. 22, 24.

56 E. Herzfeld, Գ. աշխ., էջ 303: Հմմտ. D. T. Potts, *The Archaeology of Elam*, pp. 309, 350-351, 354, 374-375; P. Briant, *From Cyrus to Alexander. A History of the Persian Empire*, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, pp. 726-733. Xūzi Գշառակում է «կասարդոսի, գուշակոսի»: Էլամը Գոյնամում է Սուսիանային լուսակաւ էլիւմայիսի միջոցով՝ ընդգրկելով անլի լայն աշխարհագրութիւն (տե՛ս G. P. Basello, *Elam between Assyriology and Iranian Studies*, in: A. Panaino and A. Piras (eds.), *Schools of Oriental Studies and the Development of Modern Historiography*. Melammu Symposia 4. Milan: Università di Bologna & IsIao, 2004, pp. 8, 10):

57 И. Алиев, *История Мидии*, Баку, 1960, с. 79; И. М. Дьяконов, *Языки древней Передней Азии*, с. 87; E. Herzfeld, Գ. աշխ., էջ 188-190, 303; P. Меликов, *Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.)*, Баку, 2003, с. 74; *Языки мира. Древние реликтовые языки Передней Азии*, Москва, 2010, сс. 184-187.

58 Հեղինակը գրում է, որ Կոսսէյեան սահմանակից է Պարսիսին (տե՛ս Страбон, с. 494, 690):

51 Ռուփոս, էջ 378-379:
 52 H. Humbach, S. Ziegler, *Ptolemy Geography*, book 6, pp. 58-59, 60-61.
 53 Pliny, *Natural History*, VI, 133, p. 438.
 54 A. Roebel, *The Name of Elam in Sumerian, Akkadian, and Hebrew*.- "The American Journal of Semitic Languages and Literatures", Vol. 48, № 1, p. 21.
 55 И. М. Дьяконов, *Языки древней Передней Азии*, с. 85; М. А. Дандамаев, *Политическая история Ахеменидской державы*, с. 5; A. Roebel, *The*

նոյն երկրի՝ էլամ-էլիւմայիսի էթնիկական տարասեռութիւնը:

Դատելով Ստրաբոնի տեղեկութիւններից՝ Մեծ Մարաստանին հարաւում սահմանակից էր էլիւմայիսը, որն աշխարհագէտը յիշատակում է Ապոլլոնիատիս-Սիտակենայից արեւելք: Էլիւմայիսը եւ Մարաստանը սահմանակից են Մասսաբատիկայի շրջանում, որը Ստրաբոնը վերագրում է Մարաստանին՝ միաժամանակ նշելով, որ, ուրիշների կարծիքով, պատկանել է էլիւմայիսին⁵⁹: Աշխարհագէտը հաղորդում է, որ Սուսա քաղաքի բնակիչները կոչւում էին նաեւ կիսսիացիներ⁶⁰: Մէկ այլ տեղեկութեան մէջ Ստրաբոնը գրում է, որ էլիւմայիս տանող ճանապարհներից մէկն անցնում էր Մարաստանից եւ Ջագրոսի շրջանից Մասսաբատիկայի միջով, միւսը՝ Սուսիանայից Գաբիանայի միջով (Գաբիանան եւ Մասսաբատիկան էլիւմայիսի նահանգներն են)⁶¹: Ըստ էութեան, Ստրաբոնի ժամանակ Մասսաբատիկան էլիւմայիսի մէջ

էր եւ համապատասխանում է Հայկական «Աշխարհացոյցի» Մասպտանին⁶²: Պլինիոս Աւագը կոսսիեններից հիւսիս յիշատակում է Մասսաբատենէն՝ գրելով, որ Սուսայի տարածքը էլիւմայիսից բաժանւում է էլիւմայիս գետով, որը, սկիզբ առնելով Մեդիայից, հոսում է Մասսաբատենայի միջով⁶³: Էլիւմայիս գետը համապատասխանում է ներկայիս Դիզ գետին, որը սկիզբ է առնում Մարաստանից եւ թափւում Քարուն գետը: Մասսաբատիկան՝ Μεσσαβάται ձեւով, կիսսիացիների եւ Քալոնիտիսի միջեւ յիշատակում է Դիոնիսիոսը⁶⁴: Մասսաբատիկան յիշատակում է արեւելասորական եպիսկոպոսութիւնների թում⁶⁵. մայրաքաղաքն էր Սիրաւանը⁶⁶: Մասսաբատիկան՝ Մասա-

59 Страбон, с. 494. Մասսաբատիկային Գոյնամում է Անամուն Ռաւեննացու Մասսաբատոնը (տե՛ս Ravennatis Anonymi *Cosmographia*, II, 5, p. 51):

60 Страбон, с. 676.

61 Նոյն տեղում, էջ 691: Պոլիբիոսը գրում է, որ հարաւային ուղղութեամբ Մարաստանը սահմանակցում է Միջագետքին եւ Ապոլլոնիայի շրջագին, անա՛ Պարսիսին, ընդ որում՝ Սուսիանայի շրջանը նկատի ունի, երբ հաղորդում է, որ այս կողմից պաշտպանուած է Ջագրոսի լեռներով, որտեղ էլ յիշատակում է կոսսայներին, կորբեմներին, կարիսերին (տե՛ս *The General History of Polybius*, pp. 218-219; Polybius, *The Histories*, with an English translation by W. R. Paton, Vol. III, Cambridge-Massachusetts-London, 1979, Loeb Classical Library, V, 44, 7, p. 106): Կոսսայներին Պոլիբիոսը յիշատակում է անա՛ կիսիացիներ ձեւով (տե՛ս *The General History of Polybius*, pp. 274, 278): Պոլիբիոսը անա՛ գրում է, որ Սուսիանան Սելեւկեանների ժամանակ առանձին վարչական միատր էր (տե՛ս Polybius, *The Histories*, V, 46, 7; 54, 12, pp. 112, 134): Նկատելիք անա՛, որ Մեդիան էլիւմացիներին կարող էր սահմանակցել ոչ թէ հիւսիսում, ինչպէս սխալմամբ գրում է Պոլիբիոսը (Գոյն տեղում, V, 44, 9, p. 108), այլ՝ հարսում:

62 Ա. Յակոբեան, «Աշխարհացոյց» է դարի Անանուհի. գիտա-քննական բնագիր.- «Համդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2013, էջ 163: Տե՛ս անա՛ Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու յաւելումովը *Գաբիանայ*, հրատ. Ա. Սուրբեան, Վենետիկ, 1881, էջ 40. *Մատենագիրք Հայոց*, հտ. Բ, է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2157. Կ. Ս. Ստրաբոն, *Армянская География VII века*, СПб, 1877, с. 64. Յաւելում՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 22. Ա. Գ. Արքախանեան, *Անանուհի Ծիրակացու մատենագրութիւնը*, Երեւան, 1944, էջ 352:

63 Pliny, *Natural History*, VI, 134-135, pp. 438, 440. Արիստոսի կողմից յիշատակուած էլիւմայիս գետը Գոյնամում է Քարունին (Արիստոս, էջ 247-248):

64 C. Muller, *Geographi Graeci Minores*, Vol. II, Parisiis, 1861, p. 166. Այս տեղեկութիւնը կրկնում են Ռուփոս Փետոսու Ալիենոսը, Պրիսկիանոսը (Գոյն տեղում, էջ 188, 198): Μεσσαβάται-Μεσσαβάται-ը յիշատակում է Պտղոմէոսը (տե՛ս H. Humbach, S. Ziegler, *Ptolemy Geography*, book 6, p. 66):

65 I. Guidi, *Ostsyrische Bischöfe und Bischofssitze im V, VI und VII Jahrhundert*, "Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft", Bd. 43, Leipzig, 1889, S. 412; J. B. Chabot, *Synodicon Orientale*, Paris, 1902, pp. 366, 368.

66 J. Marquart, *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, S. 20; A. Колесников, *Иран в начале VII века*,- «Палестинский сборник», Л., 1970, с. 103.

բաղան, յիշատակում են նաև արաբական աղբյուրները⁶⁷:

Միևս կողմից էլ Պլինիոս Աւագը էլիւմայիսը համարում է ծովամերձ շրջան⁶⁸:

Ստրաբոնի տեղեկութիւնների⁶⁹ տեղորոշումը ցոյց է տալիս, որ էլիւմայիսը գտնուել է Սուսիանայից արեւմուտք, կոսսէյները՝ հիւսիս, ուքսերը՝ արեւելք: Անկասկած, Սուսիանան Աքեմենեան դարաշրջանում կապուած էր մայրաքաղաք Սուսայի հետ, որի շուրջ ընկած տարածքները վարչական առումով կազմում են առանձին միաւոր, ինչը յետագայում դառնում է աշխարհագրական հասկացութիւն: էլիւմացիները յիշատակում են ոչ միայն Բաբելոնիայի հարեւանութեամբ, այլև ուքսերի հարեւանութեամբ⁷⁰: Այս վերջին հանգամանքը թոյլ է տալիս եզրակացնել, որ էլամ տեղանունը շարունակում էր պահպանուել նախկին էլամական թագաւորութեան ծայրամասերի՝ հիմնականում բարձրլեռնային տարածքների վրայ: Իսկ Սուսիանան հարաւում տարածւում էր մինչև Պարսից ծոց⁷¹:

Գաւգամելայի ճակատամարտին Արիանոսը սուսիաններին եւ ուքսերին յիշատակում է միասին՝ Աբուլիտի որդի Օքսաթրի հրամանատարութեամբ⁷²: Ռազմագաշտում սուսիանները եւ ուքսերը գտնուում էին արդէն պարսից բանակի տարբեր թեւերում⁷³: Արիանոսի տեղեկութիւններից յստակ է, որ, այսպէս կոչուած, դաշտային ուքսերը գտնուել են Սուսայի սատրապի՝ Աբուլիտի ենթակայութեան տակ, իսկ լեռ-

67 К. П. Патканов, Армянская География VII века; J. Marquart, *Erānšahr*, S. 20; А. Колесников, *Завоевание Ирана арабами (Иран при «праведных халифах)*, Москва, 1982, с. 112, 190.

68 Pliny, *Natural History*, VI, 136, p. 440.

69 Страбон, с. 494, 686, 690.

70 Նոյն տեղում, էջ 679:

71 Նոյն տեղում, էջ 676:

72 Արիանոս, էջ 97:

73 Նոյն տեղում, էջ 101:

նային ուքսերն անկախ էին⁷⁴: Աբուլիտին աւելի ուշ փոխարինում է Օքսաթրը, որին ենթարկում էին նաև պարետակենները⁷⁵: Արիանոսը նաև ուքսերին եւ քոսէյներին հարեւաններ է համարում⁷⁶:

Ռուփոսը Գաւգամելայի ճակատամարտում ուքսերի փոխարէն յիշատակում է բելիտներին՝ Քոսէյեան լեռների բնակիչներին. սրանք եւ սուսացիները գտնուում էին բանակի տարբեր թեւերում⁷⁷: Ռուփոսը նոյնպէս Աբուլիտին յիշատակում է որպէս Սուզայի սատրապ⁷⁸: Ըստ Ռուփոսի՝ Ալեքսանդր Մակեդոնացին ուքսերի մարզ է մտնում Պասիտիգրիսն անցնելուց յետոյ. ընդ որում՝ պատմիչը ուքսերի մարզը յիշատակում է Պարսքի եւ Սուզայի միջեւ՝ չմտցնելով Սուզայի սատրապութեան մէջ: Ուքսերն ունէին առանձին սատրապ, եւ նրանց հպատակեցնելուց յետոյ Ալեքսանդրը ուքսերին դնում է Սուզայի սատրապի ենթակայութեան տակ⁷⁹:

Ամփոփենք: Կատարուած քննութիւնը ցոյց է տալիս, որ հին էլամի տարածքը Աքեմենեան Պարսկաստանի տիրապետութեան դարաշրջանում համապատասխանում էր էլիւմայիս, Սուսիանա, Կիսիական Քոսսէյա, Ուքսիա անուններով երկրներին, որոնցից իւրաքանչիւրը աշխարհագրական առումով ամբողջութեամբ կամ մասամբ նոյնանում էր էլամին կամ էլ վերջինիս այս կամ այն մասին:

74 Նոյն տեղում, էջ 108-109:

75 Նոյն տեղում, էջ 112:

76 Նոյն տեղում, էջ 259:

77 Ռուփոս, էջ 350:

78 Նոյն տեղում, էջ 376-377:

79 Նոյն տեղում, էջ 378-379:

ՍԱՀԱԿ ՄՌՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ»

ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Ալեքսան Յակոբեան

«Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի վաղ գիտական ուսումնասիրութիւններում (ԺԹ դ. երկրորդ կէսից) լրջօրէն քննուած էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մատենադարանի հ^մ 751 (ըստ Կարինեան ցուցակի) գրչագիրը, որն այն ժամանակ մասնագէտներին յայտնի ամենահինն էր (ընդօրինակուած էր 1368-ին Կաֆայում. ներկայումս՝ Մաշտոցի ան. Մատենադարան, ձեռ. հ^մ 659): Այդպիսին էր մօտեցումը նաև Սիրական Տիգրանեանի՝ որոշ ուշացումով հրատարակուած յատուկ աշխատութեան մէջ (Պետրոգրադ, 1918)¹: Նա էր մի քանի տասնեակ ձեռագրեր առաջինը դասել 6 խմբերի՝ ցոյց տալով դրանց առանձնատկութիւնները եւ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակն արտացոլելու հնարաւորութիւնների չափը, ընդ որում՝ մեծ ուշադրութիւն նուիրելով Էջմիածնի հ^մ 751 գրչագրին: Վերջնական ճիշդագրութեան կազմումը Ս. Տիգրանեանը չհասցրեց աւարտին, իսկ 1923 թ. հրատարակած դասախօսութիւններում, ի վերջոյ, կանգ առաւ մէկ ուրիշ գիտարկման վրայ՝ գրելով, թէ, հաւանաբար, Ը դարի հեղինակային սկզբնօրինակն առաւել անխաթար պահպանել է արդէն մասնագէտների տեսադաշտում գտնուող հնագոյն՝ Նոր Զուղայի գրչագիրը (Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրատան հ^մ 131, 1098 թ., նշուած է *A տառանիշով*): Յետագայում, այսպէս կոչուած, Ա ձեռագրախմբին պատկանող այդ գրչագրի՝ Օձնեցու սկզբն-

օրինակն արտացոլելու հնարաւորութիւնը փորձեց հիմնաւորել Հ. Ներսէս Ակինեանը՝ ըստ էութեան բերելով բացարձակութեան աստիճանի²: 1964 եւ 1971 թթ. Վազգէն Յակոբեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած երկու ստուարածաւալ հատորներով ամբողջացուեց՝ համապարփակ ձեւով առաջին անգամ Յովհաննէս Օձնեցու կողմից ի մի բերուած եւ յետագայ դարերում նոր կանոնախմբերով լրացուած-խմբագրուած հայ միջնադարեան գրական մշակոյթի նշանակալի յուշարձաններից մէկի՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտաքննական հրատարակութիւնը³:

Սակայն միաժամանակ ձեռագրական ամբողջ նիւթի աւելի ուշագիր քննութեան արդիւնքում պարզ դարձաւ, որ նշուած հրատարակութեան հետապնդած առաջին խնդիրը՝ «Կանոնագիրք Հայոցի» սկզբնագիր Յովհաննէս Օձնեցու կողմից համախմբուած կանոնական ժողովածոյի նախօրինակի ընդգրկման եւ բովանդակութեան հարցը, կարիք է գգում նոր մեկնաբանութեան: Գիտաքննական հրատարակութեան հեղինակն, ի վերջոյ, կանգ է առել այն մօտեցման վրայ, թէ Օձնեցու կազմած Կանոնագրքի բնագիրն անխաթար ձեւով պահպանուել է 1098 թ. ընդօրինակուած Նոր Զուղայի հ^մ 131 ձեռագրում եւ կառուցուածքով ու ընթացումներով նրան յարող Ա ձեռագրախմբի միւս գրչագրերում

2 Հ. Ն. Ակինեան, *Բնութիւն Ս. Սահակի վերագրուած կանոնների. Մատենադարական ուսումնասիրութիւն*, Վիեննա, 1950:

3 *Կանոնագիրք Հայոց*, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Եր., 1964, հտ. Բ, Եր., 1971:

1 С. Тигранян, *Древнеармянская книга канонов, Очерки описания и исследования памятника*, I, Описательная часть, Петроград, 1918.